Գր. 28.02.2014թ
կոդ՝ 11414115

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

2014թ. մերժերեսարի 14 N 123-Ն

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

2014թ. մերժերեսարի 19 N 11 -Ն

քաղ. Երևան

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՈՒ ՁԵՂՆԱՀԱՐԿԵՐՈՒՄ ԿԱՊԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի N 1130-Ն որոշման 5-րդ կետի դրույթներով՝ [illegible]

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ՝

1. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից սպասարկվող շենքերում և շինություններում՝ Կարգի 15-րդ կետով սահմանված վարձավճարի (այսուհետ՝ Սկզբնական վարձավճար) 100 տոկոսը հատկացվում է ՊՈԱԿ-ի հաշվարկային հաշվին:

2) ՊՈԱԿ-ի կողմից չսպասարկվող շենքերում և շինություններում Սկզբնական վարձավճարի 90 տոկոսը հատկացվում է տվյալ շենքը, շինությունը սպասարկող

կազմակերպությանը (եթե այդպիսին առկա է) կամ իրավասու մարմնի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բացված արտաբյուջետային հաշվին, իսկ 10 տոկոսը՝ ՊՈԱԿ-ի հաշվարկային հաշվին:

3) Կարգի 16-րդ կետի համաձայն հաշվարկված՝ պայմանագրով սահմանված վարձավճարի և Սկզբնական վարձավճարի մեծության դրական տարբերության 10 տոկոսը հատկացվում է ՊՈԱԿ-ի հաշվարկային հաշվին, 40 տոկոսը՝ տվյալ շենքը, շինությունը սպասարկող կազմակերպություններին (եթե այդպիսիք առկա են) կամ իրավասու մարմնի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բացված արտաբյուջետային հաշվին, իսկ 50 տոկոսն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «ՀՀ պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու վարձավճարների» թիվ 900005220919 հաշվին:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Կարեն Թամազյանին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ Աշոտ Մարկոսյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Դ.Սարգսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա.Սահակյան